ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«___»_____ 2022թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի Հ. 345-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 16.03.2021 թվականի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի մրցույթների կազմակերպման և անցկացման հանձնաժողով ստեղծելու մասին» հ. 345-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված

Երևան քաղաքի ավագանու

«__»_____ 2022թ.

N_____Ա որոշման

«Հավելված

Երևանի քաղաքի ավագանու

«16»_03_2021 թվականի

N_345-Ա_ որոշման

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ

Լևոն Հովհաննսիյան

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ

Հանձնաժողովի նախագահի տեղակալ

Դավիթ Դալլաքյան — Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար

Հանձնաժողովի անդամներ

Համապատասխան վարչական շրջանի ղեկավարը, նրա բացակայության դեպքում՝ տեղակալը

Տարոն Մարգարյան — Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար

Գարեգին Խաչատրյան — Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ

Վիլեն Արևաշատյան — Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ-գլխավոր ֆինանսիստ

Անդրանիկ Սեդոյան — Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետ

Արմեն Հարությունյան — Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային վարչության պետի

	պաշտոնակատար
Արմեն Կոտոյյան	Երևան քաղաքի ավագանու անդամ՝ «Իմ քայլը» խմբակցություն
Արմեն Ներսիսյան	Երևան քաղաքի ավագանու անդամ՝ «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն
Թեհմինա Վարդանյան	Երևան քաղաքի ավագանու անդամ՝ «Լույս» խմբակցություն
	Հանձնաժողովի քարտուղար
Ռուբեն Խալաթյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության գլխավոր մասնագետ
	Արձանագրող
Դավիթ Կարապետյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ»:

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16.03.2021 ԹՎԱԿԱՆԻ Հ. 345-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածում տեղի է ունեցել փոփոխություն, ըստ որի՝ հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար համայնքի ավագանին է ստեղծում մրցութային հանձնաժողով, որի կազմում կարող են ընդգրկվել համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետներ և ավագանու անդամներ: Համայնքի ավագանին մրցութային հանձնաժողով ստեղծելու որոշմամբ հանձնաժողովի կազմից նշանակում է աճուրդավար և արձանագրող: Երևան քաղաքի ավագանու 16.03.2021 թվականի հ. 345-Ա որոշմամբ հաստատված հանձնաժողովի կազմում տեղի են ունեցել փոփոխություններ:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևան քաղաքի ավագանու 16.03.2021 թվականի հ. 345-ա որոշման մեջ փոփոխություն անելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ №1

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16.03.2021 ԹՎԱԿԱՆԻ Հ. 345-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 16.03.2021 թվականի հ. 345-ա որոշման մեջ փոփոխություն անելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ №2

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16.03.2021 ԹՎԱԿԱՆԻ Հ. 345-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 16.03.2021 թվականի հ. 345-ա որոշման մեջ փոփոխություն անելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**